

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԻՋԵՎ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացման դերը գնումների գործընթացում բարձրացնելու և օրենսդրության պահանջները պահպանելու նպատակով, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) համագործակցում են՝

1) գնումների գործընթացում տնտեսվարող սուբյեկտների կողմից հակամրցակցային հնարավոր կամ փաստացի համաձայնությունների դրսևորումների հետ կապված գործերի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի իրականացման,

2) գնումների ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկման և մշակման ուղղություններով:

2. Սույն ուղեցույցի 1-ին կետով նախատեսված ուղղությունների իրականացման սահմաններում Նախարարությունն ու Հանձնաժողովն իրականացնում են տեղեկատվության փոխանակում, ներկայացուցչության ապահովում, ստեղծում են համատեղ աշխատանքային խմբեր, կազմակերպում են համատեղ խորհրդակցություններ, աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ և թեմատիկ սեմինարներ:

3. Նախարարությունը համագործակցության շրջանակներում՝

1) Հանձնաժողովին տեղեկացնում է գնումների գործընթացում տնտեսվարող սուբյեկտների կողմից հակամրցակցային հնարավոր կամ փաստացի համաձայնությունների դրսևորումների մասին հայտնի դարձած հանգամանքների վերաբերյալ.

2) ըստ անհրաժեշտության ապահովում է իր ներկայացուցիչների մասնակցությունը գնումների գործընթացում տնտեսվարող սուբյեկտների կողմից հակամրցակցային հնարավոր կամ փաստացի համաձայնությունների դրսևորումների հետ կապված գործերի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման աշխատանքներին և դրանց վերաբերյալ դատական վարույթներին:

4. Հանձնաժողովը համագործակցության շրջանակներում՝

1) Նախարարության ներկայացուցիչներին ներգրավում է գնումների գործընթացում տնտեսվարող սուբյեկտների կողմից հակամրցակցային հնարավոր կամ փաստացի համաձայնությունների դրսևորումների հետ կապված գործերի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման աշխատանքներին.

2) հակամրցակցային համաձայնությունների հնարավոր դրսևորումների բացահայտման նպատակով ապահովում է իր ներկայացուցչի մասնակցությունը մրցույթի հանձնաժողովի աշխատանքներին՝ առանց որոշումների կայացման իրավունքի.

3) Նախարարությանը տեղեկացնում է վարչական վարույթի ընթացքում օրենսդրության հնարավոր կամ փաստացի խախտումների վերաբերյալ հայտնի դարձած հանգամանքների վերաբերյալ:

5. Նախարարությունն ու Հանձնաժողովն ապահովում են ստացված տեղեկատվության գաղտնիությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: